

Առևտրային քաղաքականություն. մաքսատուրք

Համաշխարհային առևտրի տեսությունը, իր նախապայմանների շրջանակում, հիմնավորում է, որ ազատ առևտուրը, առնվազն փոքր երկրի համար, ամենից արդյունավետ քաղաքականությունն է: Սակայն երկրները ավանդաբար դիմում են առևտրի սահմանափակման այս կամ այն եղանակներին, որոնցից առավել հաճախ կիրառվողը ներմուծման հարկն է՝ մաքսատուրքը: Որոշ երկրներում, գերակշռաբար առաջնային ապրանքների, օրինակ՝ նավթի արտահանման նկատմամբ, կիրառվում են նաև արտահանման մաքսատուրքեր: Հայաստանում արտահանման մաքսատուրքեր, բնականորեն, չեն կիրառվում, իսկ, օրինակ, ԱՄՆ-ում դրանց կիրառումը արգելվում է սահմանադրությամբ: Բազմաթիվ երկրներում լայնորեն կիրառվում են նաև առևտրի ոչ մաքսային սահմանափակումներ, որոնցից հատկապես նշանակալի են ներմուծման (երբեմն նաև արտահանման) քանակական սահմանափակումները՝ քվոտա, ու ներքին արտադրության կամ արտահանման լրավճարները՝ սուբսիդիա:

Առևտրի սահմանափակումների հետևողական նվազեցումը իրականացվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակում: ԱՀԿ գործունեության արդյունքում արդյունաբերական ապրանքների ներմուծման միջին մաքսատուրքը ետպատերազմյան շրջանի ավելի քան 45%-ից ներկայումս նվազ քան 4% է կազմում: Այնուհանդերձ, Չարգացած երկրներում շարունակում են համեմատաբար բարձր մնալ Չարգացող երկրների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ապրանքների, հատկապես՝ գյուղմթերքների ներմուծման սահմանափակումները:

Մաքսատուրքերը՝ ըստ հաշվարկման մեթոդի, երկուսն են. (1) արժեքային (ad-valorem), որը հաշվարկվում է տոկոսներով՝ ապրանքի գնի նկատմամբ (օրինակ՝ 10% Հայաստան ավտոմեքենայի ներմուծման դեպքում), և (2) յուրահատուկ (specific), որը հաշվարկվում է հաստատուն մեծությամբ՝ ապրանքի միավորի համար և կախված չէ գնից (օրինակ՝ 75 դրամ՝ Հայաստան մեկ լիտր շամպայնի ներմուծման համար):

Եթե ներմուծված ապրանքի գինը նախքան մաքսատուրք վճարելը՝ նշանակենք P_M , իսկ մաքսատուրքը վճարելուց հետո՝ P_D , ապա յուրահատուկ մաքսատուրքի դեպքում $P_D = P_M + t_S$, որտեղ t_S -ը յուրահատուկ մաքսատուրքն է, իսկ արժեքային մաքսատուրքի դեպքում $P_D = P_M(1 + t_{AV})$, որտեղ t_{AV} -ն արժեքային մաքսատուրքն է:

Հայաստանում ներմուծման մաքսատուրքերի բացարձակ մեծամասնությունը հաշվարկվում է արժեքային մեթոդով: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը կամ զրո են, կամ 10%: Ընդհանուր առմամբ սպառողական ապրանքների նկատմամբ կիրառվում է 10% մաքսատուրք, իսկ արդյունաբերական ապրանքների ու հումքի նկատմամբ՝ 0% մաքսատուրք: Արտահանումը, ինչպես նշվեց, ամբողջովին ազատված է մաքսատուրքերից:

Յուրահատուկ դրույքաչափով մաքսատուրքեր Հայաստանում կիրառվում է զարեջրի, գինու, սպիրտի, օդու և այլ ակոհոլային խմիչքների նկատմամբ: Օրինակ՝ զարեջրի 1 լիտրի համար՝ 50դր, գինու 1 լիտրի համար՝ 100դր, օդու 1 լիտրի համար՝ 380դր. (օդու յուրահատուկ մաքսատուրքը հաշվարկվում է 100% սպիրտի վերահաշվարկով):

Մաքսի ազդեցությունը կարող է նշանակալիորեն տարբերվել կախված հաշվարկման եղանակից: Այսպես՝ ներմուծման գնի աճի դեպքում արժեքային մաքսատուրքից պետքույժե մուտքերն ավելանում են, իսկ յուրահատուկ մաքսատուրքի դեպքում մնում են անփոփոխ: Բացի այդ յուրահատուկ մաքսատուրքը կարող է կիրառվել էժան ապրանքատեսակների ներմուծումը խոչընդոտելու նպատակով: Օրինակ՝ գինու ներմուծման նկատմամբ Հայաստանում սահմանված է յուրահատուկ մաքսատուրք՝ մեկ լիտրի հաշվով 100դր: Հետևաբար՝ բուլղարական կամ մոլդովական էժան գինիների ներմուծման դեպքում մաքսատուրքի կշիռը ապրանքի գնի մեջ կլինի անհամեմատ մեծ, քան ֆրանսիական կամ վրացական համեմատաբար թանկ գինիների ներմուծման դեպքում:

Մաքսատուրքերի կիրառումը հետապնդում է տարբեր նպատակներ: Զարգացող երկրների մեծ մասում մաքսատուրքերը կիրառվում են պետքույժեի եկամուտների ապահովման համար. պատճառը նրանում է, որ Զարգացող երկրներում տնտեսական գործունեության զգալի մասը ստվերային է, և եկամուտների մեծ մասը չի հարկվում: Իսկ եկամուտների հարկման համեմատ՝ ներմուծման հարկումը ավելի դյուրին է: Հայաստանում մաքսատուրքերի կշիռը պետքույժեի հարկային եկամուտներում բավականաչափ ցածր է և ներկայումս միջին հաշվով կազմում է 4-5%:

Մաքսատուրքի ազդեցությունը. մասնակի հավասարակշռություն

Երկրագնդի մաքսատուրքերի գերակշիռ մասը սահմանված է ներմուծման և ոչ թե արտահանման նկատմամբ: Այդ իսկ պատճառով նախ անդրադառնանք ներմուծման մաքսատուրքին:

Ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը զգալիորեն տարբերվում է մեծ և փոքր երկրների դեպքում: Հիշենք, որ փոքր ենք համարում այն երկիրը, որի առևտրի ծավալները նշանակալի չեն, որ ազդեն միջազգային հարաբերական գների վրա: Համապատասխանորեն՝ մեծ երկրի դեպքում առևտրի ծավալները այնքան նշանակալի են, որ ազդում են միջազգային

հարաբերական գնի վրա: Այսինքն՝ փոքր երկրի համար միջազգային հարաբերական գները հաստատուն են, իսկ մեծ երկրի համար՝ փոփոխուն:

Նախ դիտարկենք փոքր երկրի տարբերակը: Գրաֆիկ 69-ում պատկերված է մասնակի հավասարակշռության տարբերակում փոքր երկրի դեպքում ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը: D^d -ն և S^d -ն արտահայտում են փոքր երկրում X ապրանքի պահանջարկն ու առաջարկը: Ավտարկիայի դեպքում շուկան հավասարակշռվում է E կետում: Եթե X ապրանքում երկիրը համեմատական առավելություն չունի, ապա այդ ապրանքի միջազգային գինը կլինի ավելի ցածր և ազատ առևտրի դեպքում երկիրն այդ ապրանքը կներմուծի: Քանի որ երկիրը փոքր է, ապա ապրանքի ներմուծումը, անկախ քանակից, չի ազդի դրա միջազգային գնի վրա, այսինքն՝ երկրի համար X ապրանքի միջազգային առաջարկի ուղիղը՝ S^w , բացարձակ առաձգական է: Առկա P_X^1 գնով երկիրը կարտադրի X^1 քանակ, բայց քանի որ սպառումը կազմում է X^2 , ապա կներմուծի $(X^2 - X^1)$:

Նկատենք, որ X ապրանքի արտադրությունը ազատ առևտրի դեպքում՝ ավտարկիայի համեմատ, փոքր է: Ըստ Հեկշեր-Օհիլին թեորեմի X -ը պետք է լինի այն ապրանքը, որում առավել ինտենսիվ է օգտագործվում այդ երկրի առավել հազվագյուտ ռեսուրսը: Իսկ ըստ Ստոլպեր-Սամուելսոն թեորեմի, այդ առավել հազվագյուտ ռեսուրսի իրական եկամուտը ազատ առևտրի դեպքում նվազում է և, հետևաբար, այդ ռեսուրսի սեփականատերերը պետք է պահանջեն, որպեսզի X ապրանքի ներմուծումը հնարավորինս սահմանափակվի:

Ենթադրենք երկիրը սահմանում է t դրույքով արժեքային մաքսատուրք: Արդյունքում X ապրանքի միջազգային առաջարկի կորը այդ երկրի համար կտեղաշարժվի վեր՝ $S^w(1+t)$: Շեշտենք, որ առաջարկի կորը վեր է տեղաշարժվում մաքսի ամբողջ մեծության չափով, քանի որ երկիրը հնարավորություն չունի ազդել միջազգային գնի վրա: Նոր հավասարակշռությունում արտադրությունն ընդլայնվում է՝ X^1 -ից X^3 , ներմուծումը կրճատվում՝ $(X^2 - X^1)$ -ից $(X^4 - X^3)$, սպառումը նվազում՝ X^2 -ից X^4 :

Բարեկեցության վրա մաքսատուրքի ազդեցությունը դիտարկելու համար օգտագործենք սպառողի ավելցուկ և արտադրողի ավելցուկ հասկացությունները: Հիշենք, որ պահանջարկի կորը ցույց է տալիս ապրանքի այն քանակները, որ սպառողները պատրաստ են և կարող են ձեռք բերել բոլոր հնարավոր գներից յուրաքանչյուրի դեպքում որոշակի ժամանակաշրջանում: Իսկ պահանջարկի կորից ներքև, բայց շուկայական գնից վեր ընկած տիրույթը ցույց է տալիս այն օգտակարությունը՝ դրամական արտահայտությամբ, որ ստանում են սպառողները՝ տվյալ ապրանքը ավելի ցածր գնով, քան պատրաստ էին վճարել, ձեռք բերելու արդյունքում: Այդ տիրույթը կոչվում է *սպառողի ավելցուկ*: Գրաֆիկ 69-ում, երբ գինը կազմում է P_X^1 , ապա սպառողի ավելցուկը արտահայտվում է $P_X^1 \delta \alpha$ եռանկյունով: Ինչ վերաբերում է արտադրողի ավելցուկին, ապա հիշենք, որ առաջարկի կորը ցույց է տալիս ապրանքի այն քանակները, որ արտադրողները պատրաստ են և կարող են առաջարկել շուկայում՝ գնի տարբեր հնարավոր մակարդակներից յուրաքանչյուրի դեպքում որոշակի

Ժամանակաշրջանում: Իսկ առաջարկի կորից վեր, բայց շուկայական գնից վար ընկած տիրույթը ցույց է տալիս այն օգուտը, որ ստանում են արտադրողները՝ ապրանքն իրացնելով ավելի բարձր գնով, քան պատրաստ էին արտադրել: Այդ տիրույթը կոչվում է արտադրողի ավելցուկ և մեր օրինակում արտահայտվում է $P_X^1 \varepsilon \phi$ եռանկյունով:

Փաստորեն մաքսատուրքի հետևանքով սպառողի ավելցուկը կրճատվում է $(a + m + b + r)$ տիրույթի չափով, սակայն, միևնույն ժամանակ, արտադրողի ավելցուկը մեծանում է a տիրույթի չափով և, հետևաբար, եթե ընդունենք, որ սպառողի բարեկեցության նվազումը մեկ դոլարով և արտադրողի բարեկեցության բարելավումը մեկ դոլարով միմյանց համարժեք են, ապա a տիրույթը հասարակության համար ոչ թե կորուստ է, այլ փոխանցում սպառողներից արտադրողներին:


Իսկ պետական բյուջեի եկամուտը մաքսատուրքի հետևանքով կազմում է b տիրույթը, որի մակերեսը հավասար է ներմուծման քանակի և մաքսատուրքի արտադրյալին: Դարձյալ եթե ընդունենք, որ կառավարությունը իր մաքսային եկամուտները ամբողջովին փոխանցում է հասարակությանը, ապա b տիրույթը նույնպես հասարակության համար կորուստ չէ:

m և r եռանկյունիները, սակայն, հասարակության համար անվերականգնելի կորուստ են: m եռանկյունին կորուստ է արտադրության անարդյունավետ ընդլայնման հետևանքով, քանի որ X_1 -ից X_3 հատվածում ներքին արտադրության ծախսը (որն արտահայտվում է ներքին առաջարկի կորով) ավելին է, արտասահմանում արտադրության ծախսը (որն արտահայտվում է միջազգային առաջարկի կորով): Նշենք, որ արտադրության արդյունավետությունը պահանջում է, որ ապրանքները արտադրվեն հնարավոր նվազագույն ծախսով, իսկ նշյալ հատվածում երկրի ներսում համեմատաբար բարձր արտադրության ծախսերը վկայում են, որ այդ ռեսուրսներն ավելի արդյունավետ կլինեին օգտագործել այլ ապրանքների արտադրությունում:

r եռանկյունին արտահայտում է անվերադառնալի կորուստ սպառման անարդյունավետ կրճատման պատճառով. սպառողներն այլևս չեն կարող ձեռք բերել X_4 -ից X_2 քանակությունը P_X^1 միջազգային գնով: Նկատենք, որ X_4 -ից X_2 հատվածում սպառողն ապրանքի յուրաքանչյուր միավորն ավելի բարձր է գնահատում (որն արտահայտվում է ներքին պահանջարկի կորով), քան է ներմուծման ծախսը ազատ առևտրի դեպքում (որն արտահայտվում է միջազգային առաջարկի կորով): Այնինչ սպառման արդյունավետությունը պահանջում է որպեսզի ապրանքի սպառման սահմանային օգտակարությունը գերազանցի նրա ձեռք բերման սահմանային ծախսը:

Այսպիսով՝ մաքսատուրքի հետևանքով փոքր երկրի բարեկեցության կորուստը հավասար է m և r եռանկյունիների գումարին: Մաքսատուրքի արդյունքում ներմուծումը կրճատվում է, իսկ առկա միջազգային հարաբերական գնով, դա նշանակում է նաև արտահանման կրճատում: Այսպիսով, առևտրի ծավալները կրճատվում են, և, հետևաբար, մաքսատուրքը կրճատում է այն օգուտը, որը երկիրը կարող էր ստանալ ազատ առևտրից:


Գրաֆիկ 69: Ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը արտադրության, սպառման, ներմուծման և բարեկեցության վրա



Մաքսատուրքերի կիրառումը ազդում է նաև եկամուտների բաշխման վրա: Ըստ Հեկշեր-Օհլին թեորեմի՝ երկիրը ներմուծում է այն ապրանքը, որում համեմատաբար ինտեսիվ է օգտագործվում երկրի համեմատաբար հազվագյուտ ռեսուրսը: Քանի որ մաքսատուրքը մեծացնում է ներմուծվող ապրանքի գինը, իսկ ըստ Ստոլպեր-Սամուելսոն թեորեմի, ապրանքի գնի բարձրացումը գերազանցող չափով մեծացնում է նրանում ինտեսիվորեն օգտագործվող ռեսուրսի իրական եկամուտը և կրճատում է մյուս ռեսուրսի իրական եկամուտը, ապա մաքսատուրքը բերում է համեմատաբար առատ ռեսուրսի իրական եկամտի նվազմանը և համեմատաբար հազվագյուտ ռեսուրսի իրական եկամտի բարձրացմանը: Կարճատև ժամանակաշրջանում, սակայն, եթե ընդունենք, որ կապիտալ ռեսուրսը մասնագիտացված է, իսկ աշխատուժը՝ ոչ, ապա մաքսատուրքի հետևանքով աշխատուժ ռեսուրսի գինը կաճի նվազ չափով, քան ներմուծվող ապրանքինը, այսինքն՝ աշխատուժ ռեսուրսը կտուժի: Ինչ վերաբերում է կապիտալին, ապա ներմուծմանը փոխարինող ապրանքի արտադրությունում մասնագիտացված կապիտալի գինը կաճի գերազանցող չափով, իսկ արտահանվող ապրանքի արտադրությունում մասնագիտացված կապիտալի գինը կկրճատվի:

Երբեմն երկիրը մաքսատուրք է սահմանում ոչ միայն ներմուծման, այլև արտահանման նկատմամբ: Արտահանման մաքսատուրքները կարող են հետապնդել տարբեր նպատակներ: Օրինակ՝ արտահանումը սահմանափակելու միջոցով, ներքին շուկայում արհեստականորեն ցածր պահել գները: Այսպես՝ հաշվի առնելով միջազգային շուկայում հացահատիկի գների բարձրացումը Ռուսաստանը 2007թ-ի նոյեմբերի 12-ից մինչև 2008թ-ի ապրիլի 30-ը սահմանել է 10% մաքսատուրք հացահատիկի արտահանման նկատմամբ՝ ներքին շուկայում գների բարձրացում չթույլատրելու նպատակով: Արտահանման մաքսատուրքը կարող է նաև նպատակ ունենալ զարգացնել ներքին արտադրությունը: Այսպես՝ Ֆինլանդիայում թղթի արտադրությունը մեծապես կախված է Ռուսաստանից փայտանյութի ներմուծումից: Ռուսաստանը, նպատակ ունենալով ֆիննական ընկերություններին ստիպել թղթի արտադրության ձեռնարկություններ հիմնել Ռուսաստանում, 2007թ-ին փայտանյութի արտահանման մաքսատուրքը մեկ խորանարդ մետրի դիմաց 4 եվրոյից բարձրացրեց 10 եվրո,

Գրաֆիկ 70: Արտահանման մաքսատուրքի ազդեցությունը արտադրության, սպառման, ներմուծման և բարեկեցության վրա



Իսկ 2008թ-ին մաքսատուրքը կկազմի 15 եվրո: Արտահանման մաքսատուրք կարող է սահմանվել նաև ճիշտ հակառակ նպատակով՝ ներքին արտադրությունը կրճատելու համար: Այսպես՝ Չինաստանը 2005թ-ին արտահանման մաքսատուրքեր սահմանեց պղնձի, նիկելի, ալյումինի արտահանման նկատմամբ՝ նպատակ ունենալով սահմանափակել էներգատար մետաղների արտադրությունը և դրանով իսկ նվազեցնել էներգիայի ներքին սպառումը:

Արտահանման մաքսատուրքերը կարող են հետապնդել նաև պետական բյուջեի եկամուտները բարձրացնելու նպատակ:

Մասնակի հավասարակշռության տարբերակում փոքր երկրում արտահանման մաքսատուրքի ազդեցությունը պատկերված է Գրաֆիկ 70-ում: Ազատ առևտրի դեպքում ապրանքի միջազգային և ներքին գները կազմում են P_X^1 , և երկիրը արտահանում է $(X^2 - X^1)$ քանակություն: Քանի որ երկիրը փոքր է, ապա արտահանման մաքսատուրքի սահմանման դեպքում արտահանողները ապրանքը արտաքին շուկայում նախկինի պես իրացնում են P_X^1 գնով, սակայն, մաքսատուրքի հետևանքով նրանց մնում է դրա $P_X^1(1 - t)$ մասը: Քանի որ արտադրողների համար փաստացի գինը կրճատվում է, ապա կրճատվում է նաև առաջարկը՝ X^2 -ից X^4 : Միաժամանակ գնի կրճատման արդյունքում մեծանում է ներքին սպառումը՝ X^1 -ից X^3 , և, հետևաբար, արտահանումը նվազում է և կազմում $(X^4 - X^3)$:

Արտահանման մաքսատուրքի հետևանքով արտադրողի ավելցուկը կրճատվում է $a + m + b + r$ տիրույթի չափով: Որից a տիրույթն արտահայտում է արտադրողի ավելցուկի փոխանցումը սպառողին, քանի որ սպառողները հնարավորություն են ստանում ապրանքը ձեռք բերել ավելի ցածր գնով: m տիրույթը արտահայտում է սպառման անարդյունավետ աճը ներքին շուկայում, քանի որ X^1 -ից X^3 հատվածում արտասահմանում սպառողներն այդ ապրանքը գնահատում են ավելի, քան ներքին շուկայում: b տիրույթը արտահայտում է արտադրողի ավելցուկի փոխանցումը կառավարությանը՝ ի դեմս պետբյուջեի եկամուտների աճի: Իսկ r տիրույթը արտահայտում է արտադրության անարդյունավետ կրճատումը, քանի որ X^4 -ից X^2 հատվածում արտադրության ծախսերը երկրի ներսում փոքր են, քան դրսում, հետևաբար՝ արտադրության արդյունավետությունը պահանջում է, որ երկրի ներսում արտադրվի X^2 քանակություն և ոչ թե՛ X^4 :

իրականացվում է E^t կետում: Ընդ որում այդ կետում անտարբերության կորը շոշափում է ոչ թե միջազգային հարաբերական գնի ուղիղը, այլ ներքին հարաբերական գնի ուղիղը, քանի որ ներքին սպառողների համար հարաբերական գինը p -ն է:


Արձանագրենք, որ սպառման հավասարակշռության նոր՝ E^t կետում հասարակությունը սպառում է ավելի ցածր անտարբերության կորի վրա, քան ազատ առևտրին համապատասխանող E^f կետում: Վերջինս արդյունք է նրա, որ մաքսատուրքի հետևանքով երկիրը նվազ չափով է մասնագիտանում այն ապրանքի արտադրությունում, որում ունի համեմատական առավելություն և, հետևաբար, առևտրից ստացվող օգուտը լինում է ավելի ցածր:

Մեծ երկիր


Մեծ երկրի դեպքում ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը կդիտարկենք փոխառաջարկի կորերի միջոցով:

Փոխառաջարկի կորերը ցույց են տալիս, թե յուրաքանչյուր հարաբերական գնի դեպքում երկիրը որքան կարտահանի և որքան կներմուծի: Ընդունենք՝ A և B երկրները համեմատական առավելություն ունեն համապատասխանաբար X և Y ապրանքներում: Այդ դեպքում փոխառաջարկի կորերը կունենան Գրաֆիկ 72-ում պատկերված տեսքը: Աջ կողմում պատկերված A երկրի փոխառաջարկի կորը ցույց է տալիս, որ, օրինակ, p^0 միջազգային գնի դեպքում երկիրը պատրաստ է արտահանել X ապրանքի X_A^0 միավոր՝ Y ապրանքի Y_A^0 միավորի ներմուծման դիմաց: Ընդ որում, որքան միջազգային գինը բարձր է՝ ճառագայթը ուղղաձիգ է, այնքան երկիրը պատրաստ է ավելի շատ X արտահանել, քանի որ միավոր X -ի դիմաց ձեռք է բերում ավելի ու ավելի շատ Y : Այսինքն՝ A երկրի փոխառաջարկի կորի թեքումն արտահայտում է A երկրի շահագրգռվածությունը՝ մեծացնել X -ի արտահանումը՝ X -

Գրաֆիկ 72: Փոխառաջարկի կորեր



Գրաֆիկ 73: Հավասարակշիռ միջազգային հարաբերական գնի հաստատումը




ի հարաբերական գնի աճին զուգընթաց: B երկրի փոխառաջարկի կորի թեքումն էլ, նույնաբար, արտահայտում է B երկրի շահագրգռվածությունը՝ մեծացնել Y -ի արտահանումը՝ Y -ի հարաբերական գնի աճին զուգընթաց:


Միջազգային հավասարակշիռ հարաբերական գինը հաստատվում է երկու փոխառաջարկի կորերի հատման կետում (Գրաֆիկ 73), որում երկրներից յուրաքանչյուրի արտահանումը հավասարվում է մյուսի ներմուծմանը: Մնացյալ բոլոր կետերում համաշխարհային շուկան հավասարակշռված չէ: Այսպես, եթե X -ի հարաբերական գինը փոքր է հավասարակշիռ p^1 մակարդակը և կազմում է p^0 , ապա A երկիրը ցանկանում է արտահանել ավելի շատ X , քան B երկիրը ցանկանում է X ներմուծել ($X_B^0 > X_A^0$) և, միևնույն ժամանակ, A -ն ցանկանում է ներմուծել ավելի քիչ Y , քան B ցանկանում է Y արտահանել ($Y_A^0 < Y_B^0$):

Այսպիսով համաշխարհային շուկան հավասարակշռվում է երկու փոխառաջարկի կորերի հատման կետում: Այժմ ենթադրենք A երկիրը սահմանում է ներմուծման մաքսատուրք: Մեծ երկրում ներմուծման մաքսատուրքը փոփոխում է առևտրի պայմանները, քանի որ մեծ երկիրը, պահանջարկ ներկայացնելով տվյալ ապրանքի միջազգային առաջարկի զգալի մասի նկատմամբ, ներմուծման մաքս սահմանելու և ներմուծումը սահմանափակելու միջոցով արտահանող երկրին պարտադրում է գների մասնակի կրճատում: Արդյունքում՝ ներմուծող

Գրաֆիկ 74: Մաքսատուրքի ազդեցությունը փոխառաջարկի կորի վրա



Գրաֆիկ 75: Մաքսատուրքի ազդեցությունը մեծ երկրի դեպքում




մեծ երկրի առևտրի պայմանները ներմուծման մաքսատուրքի դեպքում բարելավվում են:

Գրաֆիկ 74-ում A^0 -ն արտահայտում է ազատ առևտրի դեպքում A երկրի փոխառաջարկի կորը: Մասնավորապես՝ p^0 միջազգային հարաբերական գնի դեպքում երկիրը ցանկանում է արտահանել X ապրանքի X_A^0 քանակություն՝ Y ապրանքի Y_A^0 քանակություն ներմուծելու դիմաց: Ներմուծման մաքսատուրք սահմանելու դեպքում փոխառաջարկի կորը կտեղաշարժվի A^0 -ից A^1 ՝ դեպի Y -ի առանցքը: Նման տեղաշարժը արտահայտում է այն, որ ներմուծման մաքսատուրքի սահմանման հետևանքով առևտրի ծավալները, մինչև այն հարաբերական գնի պահպանման դեպքում, կրճատվում են. հավասարակշռության նոր կետում երկիրը ցանկանում է ներմուծել և արտահանել ավելի քիչ:

Հետևաբար, երբ A երկիրը մեծ է և սահմանում է մաքսատուրք, ապա հավասարակշռությունը E^f -ից տեղաշարժվում է E^t , որում A երկրի կողմից արտահանվող X ապրանքի գինը ավելի բարձր է (Գրաֆիկ 75): Այսինքն՝ մեծ երկրի դեպքում մաքսատուրքի հետևանքով արտահանման և ներմուծման ծավալները թեպետ նվազում են, սակայն, առևտրի պայմանները բարելավվում են: Հետևաբար՝ երկրի բարեկեցության վրա ազդեցությունը կախված է նրանից, թե որ էֆեկտն է գերակշռում՝ առևտրի ծավալների կրճատման, թե՛ առևտրի պայմանների բարելավման: Հետևաբար՝ մեծ երկրի դեպքում կարելի է սահմանել մաքսատուրքի այնպիսի օպտիմալ դրույք, որ առևտրի պայմանների բարելավման դրական էֆեկտը առավելագույն չափով գերազանցի առևտրի ծավալների նվազման բացասական էֆեկտին: Նկատենք, սակայն, եթե B երկիրը ի պատասխան սահմանի մաքսատուրք, ապա առևտրի պայմանները դարձյալ կփոխվեն՝ այս անգամ ի վնաս A երկրի: Հետևաբար՝ օպտիմալ մաքսատուրքը կարող է գործել միայն այն նախապայմանով, որ B երկիրը պատասխան մաքսատուրք չի սահմանում: Նշենք, որ փոխադարձ մաքսատուրքերի սահմանումը բերում է առևտրի ծավալների հետագա նվազմանը և ընդհանուր բարեկեցության կրճատմանը:

Նկատենք՝ եթե A երկիրը լիներ փոքր, ապա B երկրի փոխառաջարկի կորը կլիներ ուղիղ գիծ (Գրաֆիկ 76), արտահայտելով այն հանգամանքը, որ A երկիրը չի կարող ազդել

Գրաֆիկ 76: Մաքսատուրքի ազդեցությունը փոքր երկրի դեպքում



հարաբերական գների վրա: Արդյունքում մաքսի սահմանումը կկրճատի միայն առևտրի ծավալները՝ առանց առևտրի պայմանները բարելավելու: Այսինքն՝ բարեկեցության վրա մաքսի ազդեցությունը կլինի միարժեքորեն բացասական:

Պաշտպանության փաստացի դրույք

Ներմուծման մաքսատուրք սահմանելով երկիրը գլխավորապես հետապնդում է ներքին արտադրողին արտաքին մրցակցությունից պաշտպանելու նպատակ: Արտադրողի փաստացի պաշտպանվածությունը, սակայն, որոշվում է ոչ միայն տվյալ ապրանքի ներմուծման մաքսատուրքով, այլև այդ ապրանքի արտադրությունում օգտագործվող միջանկյալ ապրանքների ներմուծման մաքսատուրքներով:

Դիտարկենք համակարգչի օրինակով: Ազատ առևտրի դեպքում ներքին գները պետք է հավասար լինեն միջազգայինին: Ենթադրենք՝ համակարգչի գինը կազմում է \$600: Ենթադրենք նաև՝ համակարգչի արտադրությունում օգտագործվում են \$400-ի ներմուծվող միջանկյալ ապրանքներ (միկրոպրոցեսոր, հիշողության սարք և այլն): Վերջնական արտադրանքի գնի և ներմուծվող բաղադրիչների արժեքի տարբերությունը (տվյալ դեպքում \$200) կազմում է ներքին շուկայում ստեղծվող ավելացված արժեքը: Վերջինս արտահայտում է ապրանքի արտադրությունում օգտագործված ներքին աշխատուժի ու կապիտալի արժեքը: Շեշտենք՝ քանի որ առևտուրն ազատ է, ապա ներքին ավելացված արժեքը չի կարող գերազանցել \$200-ը, քանի որ հակառակ դեպքում տեղական արտադրանքի գինը կգերազանցի ներմուծման գինը և տեղական արտադրանքը չի իրացվի: Վերջնական արտադրանքի ներմուծման նկատմամբ 10% մաքսատուրք սահմանելու դեպքում ներմուծվող համակարգչի գինը ներքին շուկայում կկազմի \$660: Տեղական արտադրանքի գինը նույնպես կարող է բարձրանալ մինչև \$660, որի դեպքում ներքին ավելացված արժեքը կկազմի \$260(= \$660 – \$400):

Պաշտպանության փաստացի դրույքը (ERP) արտահայտում է ավելացված արժեքի հավելվածը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$ERP = \frac{V_1 - V_0}{V_0}$$

որտեղ V_0 -ն ավելացված արժեքն է մաքսատուրքի սահմանումից առաջ, իսկ V_1 -ը՝ մաքսատուրքի սահմանումից հետո:

Մեր օրինակում պաշտպանության փաստացի դրույքը վերջնական ապրանքի վրա 10% մաքսատուրք սահմանելու արդյունքում կազմեց 30% = $(\$260 - \$200)/\$200$: Այժմ, եթե նաև ներմուծվող միջանկյալ ապրանքների նկատմամբ սահմանվի 5% մաքսատուրք, ապա ներքին ավելացված արժեքը կկազմի՝ $\$240 (= \$660 - \$420)$: Հետևաբար պաշտպանության փաստացի դրույքը կկազմի՝ $ERP = (\$240 - \$200)/\$200 = 20\%$:

Ֆորմալ ներկայացմամբ պաշտպանության փաստացի դրույքը կարելի է հաշվարկել հետևյալ կերպ.

$$ERP = \frac{V_1 - V_0}{V_0} = \frac{\{P(1 + t_f) - Pa(1 + t_i)\} - \{P(1 - a)\}}{P(1 - a)} = \frac{t_f - at_i}{1 - a}$$

որտեղ՝ t_f -ը վերջնական ապրանքի ներմուծման մաքսատուրքն է, t_i -ն միջանկյալ ապրանքների ներմուծման մաքսատուրքն է, P -ն վերջնական ապրանքի գինն է և a -ն ազատ առևտրի դեպքում ներմուծվող միջանկյալ ապրանքների կշիռն է վերջնական ապրանքի արժեքում: Ֆորմալ ներկայացումից հետևում է, որ $ERP > t_f$, եթե $t_f > t_i$: